ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## «ԹԱԻՐՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

## ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## (2023-2028 ԹԹ.)

### ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝

### ՄԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆԻ ԲԱՂՈՒՄՅԱՆ

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022թ. սեպտեմբերի 22-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 15-ի №16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» №35-Ա հրամանով հաստատված ձևաչափին և պահանջներին համապատասխան:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Բովանդակություն** ..... **2**
**Նախաբան** ..... **3**
**1. Ուսումնական հաստատության գործունեությունը** ..... **4**
1.1. Ի՞նչ կրթական կարիքների է բավարարում ուսումնական հաստատությունը ..... 4
1.2. Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները ..... 13
1.3. Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները ..... 16
**2. Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր** ..... **24**
2.1. Ուսումնական հաստատության շենքային պայմանները. ..... 24
2.2. Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան. ..... 25
2.3. Համագործակցությունը Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ. ..... 26
2.4. Ուսումնական հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ. ..... 28
2.5. Ուսումնական հաստատության ուսումնական միջավայրը. ..... 29
2.6. Ուսումնական մանկավարժական համակազմի մասնագիտական որակները. ..... 29
2.7. Ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը՝ չափորոշչային պահանջներին համապատասխան. ..... 30
2.8. Ուսումնական հաստատության կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները, կիրառվող նորարարությունները. ..... 31
2.9. Ուսումնական հաստատության բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը ..... 32
2.10. Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները. ..... 33
2.11. Ուսումնական հաստատության ուսումնական նպատակով կատարված ծախսերը. ..... 34
2.12. Ուսումնական հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների. ..... 35
**3. Նպատակների, խնդիրների սահմանում** ..... **37**
**4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց** ..... **39**
**5. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշներ** ..... **49**
**6. Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմներ** ..... **53**

# ՆԱԽԱԲԱՆ

*Պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է:*

*Դպրոցի կազմակերպման, ղեկավարման հիմքը զարգացման ծրագիրն է:*

**ՀՀ Արմավիրի մարզի <<Թաիրովի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ուսումնական հաստատություն կամ Դպրոց) զարգացման ծրագիրը կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է, որի հիման վրա պլանավորվում է 2023-2028 թվականների զարգացման հիմնական ուղղությունները՝ հաշվի առնելով դպրոցի և համայնքի կարիքները, ապահովելով տեսլականի իրականացումը, հիմնվելով նախորդ տարիների <<Թաիրովի միջնակարգ դպրոց>> - ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի կատարողականի վրա:**

**Դպրոցի զարգացման ծրագիրը նպատակաուղղված է հայրենասիրության, պետականության, մարդասիրական ոգով դաստիարակված, համակողմանիորեն զարգացած, մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:**

**Սույն զարգացման ծրագրի նպատակները բխում են Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման մինչև 2030 թվականն ուղղված պետական ծրագրերից:**

## 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### *1.1. Ի՞նչ կրթական կարիքների է բավարարում ուսումնական հաստատությունը*

- Ուսումնական հաստատության ***գործունեության առարկան*** յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական, հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

- Ուսումնական հաստատության ***գործունեության նպատակը*** յուրաքանչյուր երեխայի( այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

- Ուսումնական հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդասիրության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

**Զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողի հետևյալ կրթական կարիքները.**

- հայրենասեր և  պետական մտածելակերպ ունեցող,
- բազմակողմանիորեն զարգացած.
  - լեզվական գրագիտություն,
  - ինքնաճանաչողական սոցիալական կարողունակություն,
  - քաղաքացիական , բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլ կարողություններ,
- մասնագիտորեն կողմնորոշված,
- մրցունակ և ժամանակին համահունչ քայլող:

**Կրթության արդյունավետ կազմակերպման միջոցով կձևավորվի   21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ քաղաքացի:**

ՀՀ կրթության և գիտության նախարարի 15.08.2022թ-ի N 1727-Ա/Ք իր 1-ին կետի 33-րդ և 1464-Ա/2 հրամաններով տրված լիցենզիաների համաձայն դպրոցը 555 աշակերտի համար է նախատեսված և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական/ ընդհանուր՝ 1-ին աստիճան – 205 տեղ ( լիցենզիա Ա N 0073)
- Հիմնական / ընդհանուր՝ 2-րդ աստիճան – 230 տեղ ( լիցենզիա Ա N 0068)
- Միջնակարգ / ընդհանուր՝ 2-րդ աստիճան – 120 տեղ ( լիցենզիա Ա N 0061)

**Գծապատկեր 1.** Դպրոցի աշակերտների թիվը, 2018-2023թթ.



**Աղյուսակ 1.** Դպրոցի աշակերտների թիվը, 2018-2023թթ

| N | Ուստարի | Տարրական / ընդհանուր՝ 1-ին աստիճան – 205 տեղ | Հիմնական / ընդհանուր՝ 2-րդ աստիճան – 230 տեղ | Միջնակարգ / ընդհանուր՝ 2-րդ աստիճան – 120 տեղ | ԿԱՊԿՈՒ աշակերտներ | Այլ ազգի աշակերտներ | Ընդա մենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2018-2019 | 165 | 202 | 81 | 5 | 3/եզդի/ | 448 |
| 2 | 2019-2020 | 156 | 223 | 86 | 13 | 4/եզդի/ **1**/պարսիկ | 465 |
| 3 | 2020-2021 | 168 | 224 | 99 | 19 | 3/եզդի/ | 491 |
| 4 | 2021-2022 | 189 | 231 | 94 | 17 | 2/եզդի/ | 514 |
| 5 | 2022-2023 | 202 | 221 | 120 | 15 | **2**/եզդի/ **2**/պարսիկ 1 /արաբ | 543 |

- Ուսումնական հաստատությունում սովորում է 5 այլազգի աշակերտ, որոնցից 2-ը ազգությամբ եզդի են՝քույր և եղբայր՝ գերազանց առաջադիմությամբ, 2 աշակերտ՝ ազգությամբ պարսիկ, 1 աշակերտ՝ ազգությամբ արաբ:

Ուսումնական հաստատությունում չկա ազգային հիմքով խտրականություն թե՛ ուսուցման գործընթացում, թե՛ ուսուցիչ- աշակերտ և թե՛ աշակերտ- աշակերտ հարաբերություններում:

**Գծապատկեր 2.** Սովորողների ուսումնառության առաջադիմությունը և որակը 2018-2022թթ



- Ուսումնական հաստատությունը 2015 թվականից իրականացրել է ներառական կրթություն: ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում է բազմամասնագիտական թիմը (հոգեբան, սոցիալական մանկավարժ, լոգոպեդ, հատուկ մանկավարժ)՝ համագործակցելով ուսուցչի օգնականնների, ուսուցիչների և ծնողների հետ: ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվում է համապատասխան աշխատանք՝ ըստ իրենց կարիքի աստիճանի:

**Գծապատկեր 3.** ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը 2018-2023թթ.



- Ուսումնական հաստատության կրթական գործունեության կազմակերպման հիմքում ընկած է խորհրդակցական մարմինների անդամների, բազմամասնագիտական թիմի անդամների, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրենի, դպրոցին կցված իրավապահ մարմինների ներկայացուցիչների, ծնողների կողմից կատարված համագործակցային աշխատանքները: Ուսումնական հաստատությունում պարբերաբար կազմակերպվում են զրույց – հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները:

- Ուսումնական հաստատությունը 2015 թվականին ընդգրկվել է ՄԱԿ-ի ՊՀԾ կողմից կազմակերպված «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում, որը հնարավորություն է տալիս դպրոցի տարրական դասարանների աշակերտներին ապահովել առողջ, տաք սննդով, հաղթահարել աղքատությունը, բարձրացնել դպրոցականների հաճախելիությունը:

- 2016թ. մարտ ամսին ուսումնական հաստատությունը միացել է Եվրոպական դպրոցների համագործակցության «eTwinning» ծրագրին: Նշենք, որ Հայաստանը Եվրամիության Արևելյան գործընկերության շրջանակներում 2013թ հնարավորություն ստացավ միանալու Եվրոպական դպրոցների համագործակցության Իթվինինգ համայնքին: Այս տարիների ընթացքում մեր դպրոցի աշակերտներն ակտիվորեն մասնակցել են իթվինինգյան բազմաթիվ նախագծերի աշխատանքներին՝ համագործակցելով տարբեր երկրների դպրոցների հետ: Նրանք կարողացել են լավագույն ձևով ներկայացնել մեր դպրոցը և մեր երկիրը՝ միաժամանակ ձեռք բերելով նոր գիտելիքներ և զարգացնելով իրենց լեզվական, համակարգչային, համագործակցային, հաղորդակցական հմտությունները, թիմային արդյունավետ աշխատանք ներկայացնելու ունակությունները:Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են արշավներ, հանդիպումներ, վիրտուալ քննարկումներ, առցանց հանդիպումներ ու համատեղ միջոցառումներ: Իրականացված արդյունավետ աշխատանքի շնորհիվ մի շարք իթվինինգյան նախագծերի համար Թաիրովի միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները ստացել են որակի ազգային և եվրոպական հավաստագրեր ու մրցանակներ: 2017թ.մարտին ուսումնական

հաստատության «Անգլերեն» առարկայի ուսուցիչ Ա. Սաֆարյանն ընտրվել է Իթվինինգ ծրագրի դեսպան Արմավիրի մարզում: Դեսպանները հանդիսանում են Իթվինինգ ծրագրի ակտիվ և փորձառու ներկայացուցիչներ:

**Բարենպաստ կրթական միջավայրում ուսուցման և ուսումնառության միջոցով ձևավորվում է 21-րդ դարի կարողունակ քաղաքացի: Ուսումնական հաստատությունը ապահովում է սովորողների հետևյալ կրթական կարիքները.**

- Սովորողների համար ազգային հենքի վրա հիմնված որակյալ կրթություն ապահովել:
- Ձևավորել, սովորել սովորողի կարողություն:
- Ձևավորել սեփական և մյուսների ֆիզիկական և հոգեբանական հնարավորությունների գնահատման կարողություն:
- Զավորել ժողովրդավարական և քաղաքացիական կարողություն:
- Ձևավորել թվայինն և մեդիա կարողություն:
- Ձևավորել բազմակողմանիորեն զարգացած հայրենասիրական և մարդասիրական ոգով դաստիարակված քաղաքացի:
- Ձևավորել պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդ:
- Ձևավորել մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ 21-րդ դարի քաղաքացի:
- Ձևավորել քննադատական, ստեղծագործական մտածողություն ունեցող, բազմակարծիք ու մասնակցային արժեքներ կրող քաղաքացիներ:

- 2023-2024 ուստարուց Դպրոցի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների ուսուցումը  կազմակերպվելու է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված հանրակրթության պետական չափորոշչի համաձայն,իսկ 2026 թվականին ավարտվելու է հանրակրթական պետական նոր չափորոշիչների ներդրումը: Հանրակրթության պետական չափորոշիչը  ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ):Ինչպես նաև ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:Ուսումնական հաստատության տնօրենը, ուսումնական գծով փոխտնօրենը և դասավանդող ուսուցիչներն անցել են համապատասխան  վերապատրաստման դասընթացներ:
- 2023-2024 ուսումնական տարում ուսումնական հաստատությունում կազմակերպվելու է երկարօրյա ուսուցում սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա, որը նպաստելու է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին, ընտանիքին համակողմանի օգնություն

ցուցաբերելուն, դասապատրաստումներին աջակցելուն, ինքնուրույն սովորելու կարողականություններ զարգացնելուն :

**Հաստատությունում երկարօրյա խմբերի կազմակերպման հիմնական խնդիրներն են.**

1) տնային պայմաններում երեխայի կրթական աջակցության անհնարինության դեպքում՝ Հաստատության ուսումնանյութական բազայի հիման վրա այդ գործընթացների կազմակերպումը, այդ թվում նաև այլ հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախող սովորողների համար,

2) արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

3) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, այդ թվում ցածր առաջադիմությամբ, լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցելը:

## *1.2. Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները*

Ուսումնական հաստատությունը հանդիսանում է պետության կրթական քաղաքականության կրողը և պետք է նպաստի յուրաքանչյուր սովորողի՝

1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.

2) մարդկային արժանապատվության պահպանմանը.

3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.

4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.

5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.

6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:
Ապահովվի հետևյալ սկզբունքները.
1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.
2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.
3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.
4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.
5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.
6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.
7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.
8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

Ուսումնական հաստատությունը համագործակցում է պետական և համայնքային մարմինների հետ, որը միտված է կերտել պետության և համայնքի զարգացմամբ մտահոգվող և աջակցող սերունդ: 2021-2022 ուստարվա

ընթացքում ուսումնական հաստատությունում բացվեց GITC ինժեներական լաբորատորիա, որտեղ ուսուցանվում են տարբեր ինժեներական ծրագրեր Փարաքար խոշորացված համայնքում գործող ուսումնական հաստատությունների ավագ դպրոցի աշակերտների համար: Համագործակցության արդյունքում կազմակերպվում են միջոցառումներ, շաբաթօրյակներ, ծառատունկեր, ճանաչողական էքսկուրսիաներ, բազմաբնույթ հանդիպումներ, որոնք  սովորողների մեջ դաստիարակում են համայնքի նկատմամբ հոգատարություն: Զարգացման ծրագրի իրականացումն ապահովելու համար համայնքի և շահառու խմբերի հետ իրականացվել են քննարկումներ և մտքերի փոխանակում մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ: Ուսումնական հաստատությունը համագործակցում է  ԿԶՆԱԿ հիմանդրամի,ԿՏԱԿ-ի,Դասագրքերի շրջանառու հիմնադրամի և այլ կրթական հիմնադրամների հետ:Ուսումնական հաստատությունը պարբերաբար իրականացնում է համայնքի կրթական կարիքների գնահատում,որի հիման վրա կազմակերպվում են արտադասարանական խմբակներ,սեմինար-քննարկումներ և այլ միջոցառումներ:

## 1.3. Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները

### Ուսումնական հաստատության շենքային պայմանները

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության (հետայսու հիմնադիր), դպրոցի հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Թաիրով Չարենցի 2: Դպրոցը տիպային շենք է, որը կառուցվել է 1979 թվականին, կազմված 3 մասնաշենքից՝ նախատեսված 555 աշակերտի համար: Դպրոցը հիմնանորոգվել է 2017-2020թվականներին: Ունի 24 դասասենյակ, 2 վարչական աշխատասենյակներ, 1 ուսուցչանոց, համակարգչային դասասենյակ, ՆԶՊ առարկայի դասաասենյակ և զենքի պահեստ՝ ապահովված

ազդանշանային համակարգով, 44-օրյա պատերազմում զոհված մեր դպրոցի սաների անուններով անվանակոչված դասասենյակ, GITC Ինժեներական լաբորատորիա, բազմամասնագիտական խմբի աշխատանքների համար նախատեսված առանձնասենյակներ, <<Շախմատ>> առարկայի համար նախատեսված դասասենյակ, հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ՝ հարմարեցված սանհանգույցներով, մարզադաշտ 48060մ$^2$, հարմարեցված ճաշարան,բուժկետ, պահակակետ, ուսումնաօժանդակ անձնակազմի համար նախատեսված առանձնացված սենյակներ,պահուստային սենյակ, լաբորատորիա, հարմարեցված 10 սանհանգույցներ, գրադարան և ընթերցասրահ, համացանցի առկայություն: Դպրոցն ունի հարմարավետ, կանաչապատ բակ, առկա է ցայտաղբյուր: Գլխավոր մուտքն ունի թեքահարթակ՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների համար: Առկա են անվտանգության չափորոշիչներին համապատասխան առանձնացված մուտքեր՝ արտակարգ իրավիճակներում արագ և անխուչընդոտ կողմնորոշվելու նպատակով:

## Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան.

Ուսումնական հաստատությունը թերի է կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: Վերջին տարիներին ձեռք են բերվել համակարգիչներ և դյուրակիր համակարգիչներ (նոթբուք), էլեկտրոնային գրատախտակներ, լուսածրիչներ, տպիչներ:

**Աղյուսակ 2.** Դպրոցի նյութատեխնիկական բազան

| N | Գույքի անուն | քանակ | տեղեկատվություն |
|---|---|---|---|
| 1 | համակարգիչ | 3 | Համակարգիչները տեղադրված են համակարգչային կաբինետում: |
| 2 | Նոթբուք | 3 | |
| 3 | Պլանշետ | 2 | |
| 4 | Էլեկտրոնային գրատախտակ | 1 | Տեղադրված է հանդիսությունների դահլիճում: |
| 5 | Օդորակիչներ | 5 | Օդորակիչները տեղադրված են ուսուցչանոցում, համակարգչային կաբինետում, վարչական աշխատասենյակում և հանդիսությունների դահլիճում: |
| 6 | Մարզագույք | 2 | Դպրոցի սպորտդահլիճը հագեցած է համապատասխան մարզական գույքով՝ գնդակներ(վոլեյբոլի, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բասկետբոլի), պտտաձող, մագլցման պարաններ, սեղանի թենիս, ցատկապարան, օղակ, |
| 7 | Դաշնամուր | 2 | Դպրոցն ունի դաշնամուր և երաժշտական կենտրոն, որոնք օգտագործվում են երգչախմբի դասերին և միջոցառումների ընթացքում: |
| 8 | Երաժշտական կենտրոն | 1 | |
| 9 | Կահավորված խոհանոց | 1կոմպլեկտ | Դպրոցում առկա են ամբողջական կահավորված խոհանոց, սննդի պահեստ ու ճաշարան՝ նախատեսված տաք սննդի կազմակերպման համար: |
| 10 | Կահավորված խոհանոց | 1կոմպլեկտ | Դպրոցում առկա են ամբողջական կահավորված խոհանոց, նախատեսված դպրոցի աշխատակիցների համար: |

Ուսումնական հաստատությունում նյութատեխնիկական բազան հագեցած չէ, սակայն գտնվում է բավարար վիճակում և շահագործվում է նպատակին համապատասխան: Ժամանակակից մեթոդները դասապրոցեսի ընթացքում կիրառելու համար անհրաժեշտ են հետևողականորեն ձեռք բերել համակարգչային նոր միջոցներ:

***Ուսումնական հաստատության մարդկային ռեսուրսները.***

Ուսումնական հաստատությունն ունի 55 աշխատակից, որոնցից վարչական աշխատողներ-3, ուսուցիչներ -37, մանկավարժական աշխատողներ-7, ուսումնաօժանդակ անձնակազմ -8:
Ուսումնական հաստատությունը ապահովում է բարենպաստ միջավայր ուսուցչական անձնակազմի ինքնակրթության, մասնագիտական զարգացման, տարբեր միջոցառումների կազմակերպման համար: Ուսուցիչները մասնակցում են նախագծային նախաձեռնողականության և տարբեր ծրագրերի: Ուսումնական հաստատությունում առկա է համացանցի հասանելիությունը: Դպրոցում սովորում են 543 աշակերտ, որոնցից տարրական դպրոցում՝ 202 աշակերտ, միջին դպրոցում՝ 221 աշակերտ, ավագ դպրոցում՝ 120 աշակերտ:

**Աղյուսակ 3.** Մարդկային ռեսուրսները

| | | | |
|---|---|---|---|
| **1** | **Մանկավարժների ընդհանուր թիվը** | **47** | **3 վարչական** |
| 2 | Ուսուցիչների ընդհանուր թիվը | 39 | **2 վարչական** |
| 3 | Բարձրագույն կրթությամբ և ատեստավորված ուսուցիչներ | 36 | **33 կանայք** |
| 4 | Միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչներ | 3 | **2 կանայք** |
| 6 | Տարակարգ ունեցող ուսուցիչներ | 1 / 2-րդ աստիճան/ | **1 կանայք** |
| 7 | Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ | 2 /80%, 90%/ | **2 կանայք** |
| 8 | Համատեղությամբ աշխ. ուսուցիչներ | 2 | **2 կանայք** |
| **9** | **Մենթոր ուսուցիչ** | **3** | **3 կանայք** |

## *Ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինները.*

Ուսումնական հաստատության զարգացման նպատակներից է կառավարման որակի բարձրացումը, որը կիրականացվի բոլոր շահառու մարմինների համագործակցության արդյունքում: Այդ համագործակցությունը Ուսումնական հաստատության կառավարումը կդարձնի առավել մասնակցային, թափանցիկ և արդյունավետ: Ուսումնական հաստատության կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական ներքոնշյալ մարմինները, որոնք գործում են օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում.

- *կառավարման խորհուրդ,*
- *մանկավարժական խորհուրդ,*
- *ծնողական խորհուրդ,*
- *աշակերտական խորհուրդ:*

*Ուսումնական հաստատության կառավարման խորհուրդը՝*

- *տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է ընթացիկ վերահսկողություն,*
- *հաստատում է դպրոցի կազմակերպչական կառուցվածքը, ներքին կարգապահական,այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները,*

- *տնօրենի ներկայացմամբ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսական հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները,*
- *քննարկում է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,*
- *վերահսկում է դպրոցի զարգացման կատարման ծրագիրը:*

*2023-2028 թվականների Ուսումնական հաստատության տնօրեն- կառավարման խորհուրդ համագործակցությունն իրականացվելու է* «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի շրջանակներում:

***Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեությունը.***

Ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ պետական բյուջեի միջոցներից: Ֆինանսավորման չափը ձևավորվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից կհաշվարկվի դասարանների թվով:

Ուսումնական հաստատությանը հատկացված ֆինանսական միջոցները ծախսվում են՝ ելնելով Ուսումնական հաստատության կարիքներից ու հնարավորություններից: Ֆինասատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:

Կառավարման խորհրդի քննարկմանն է ներկայացվում ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական, գործնեության մասին հաշվետվությունը:

**Գծապատկեր 4.** Դպրոցի ֆինանսական ցուցանիշները, 2018-2023թթ.



**Գծապատկեր 5.** Դպրոցի բյուջեի ծախսերը ըստ ոլորտների, 2022թ.




Ուսումնական հաստատության բյուջեի ծախսման հիմնական ուղղությունն աշխատավարձը և դրան հավասարեցման վճարումներն են:

Բավարար ֆինանսական ռեսուրսների դեպքում ուսումնական հաստատության ֆինանսական գործնեության հիմնական նպատակը սովորողների ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումն է: Հնարավորությունների դեպքում ձեռք են բերվել համակարգչային նոր տեխնիկա և այլ անհրաժեշտ պարագաներ ինտերակտիվ դասապրոցեսի կազմակերպման համար:

# 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

## 2.1. Ուսումնական հաստատության շենքային պայմանները.

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ➢ Ուսումնական հաստատությունը երկհարկանի տիպային շենք է՝ կազմված 3 մասնաշենքերից (Ա, Բ,Գ):<br>➢ 2017-2021 թվականներին  Ուսումնական հաստատությունը հիմանորոգվել է պետական միջոցներով:Ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով(շենքին կից գտնվում է կաթսայատունը), շուրջօրյա ջրամատակարարմամբ, եռաֆազ հոսանքով, տարհանման ելքերով և աստիճաններով:<br>➢ Ունի հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ՝ ապահովված հանդերձարաններով, սանհանգույց- լոգարաններով, ուսուցիչ(մարզիչի) սենյակով, 2-րդ ելքով, օդափոխության համակարգով:<br>➢ Ուսումննական հաստատությունը կրթական գործունեության ապահովման համար ունի 24 լուսավոր դասասենյակ, վարչական 2 սենյակ, հարմարավետ ուսուցչանոց, համակարգչային սենյակ,գրադարան ընթերցասրահով, ՆԶՊ-ի կաբինետ, զենքի համար նախատեսված չափորոշիչներով հարմարեցված պահոց՝ ապահովված ծայնային ազդանշանով: Հաշվապահի համար նախատեսված աշխատասենյակ, բուժկետ, պահակատուն, արխիվային պահոց, մաքրուհիների համար նախատեսված պահոց սենյակներ:<br>➢ Ուսումնական հաստատությունն ունի ճաշարան և խոհանոց՝փաք սնունդ | • Ուսումնական հաստատության բակն ասֆալտապատման կարիք ունի:<br>• Ուսումնական հաստատության տարածքն ամբողջությամբ ցանկապատման կարիք ունի:<br>• Ուսումնական հաստատության մարզադաշտը կանաչապատման կարիք ունի:<br>• Կա  տեսախցիկների տեղադրման անհրաժեշտություն:<br>• Համակարգչային դասասենյակը նոր համակարգչային տեխնիկայի ձեռք բերման կարիք ունի:<br>• Գրադարանը |

| | |
|---|---|
| *փրամադրելու համար, որին մասնակցում է փարրական դպրոցի 205 աշակերփ:Մեկ խոհանոց՝ նախափեսված ուսուցիչների համար:*<br>➢ *Ուսումնական հասփափությունն ունի նկուղային հարկ, էլեկփրական վահանակի սենյակ, փեխնիկական նշանակության սենյակներ ,12 սանհանգույց:*<br>➢ *Ուսումնական հասփափությանը կից գփնվում  է մարզադաշփը:*<br>➢ *Ուսումնական հասփափության դիմաց գփնվող փարածքը կանաչապափ է, մասնակի ցանկապափված, մուփքի մոփ առկա է թեքահարթակ:*<br>➢ *Շենքային պայմանները համապափասխանում են անվփանգ շահագործման չափանիշներին:* | <u>համակարգիչների կարիք ունի, էլեկտրոնային գրականությունից օգտվելու համար:</u><br>• <u>Ուսումնական հաստատության նկուղային հարկը որպես ապաստարան կարող է հանդիսանալ 120 աշակերտի համար(ունենք 543 աշակերտ) և ունի վերանորոգման կարիք:</u> |

## *<u>2.2. Ուսումնական հասփափության նյութափեխնիկական բազան.</u>*

| ***Ուժեղ կողմեր*** | **<u>Թույլ կողմեր</u>** |
|---|---|
| ➢ *Ուսումնական հասփափությունն ունի բավարար նյութափեխնիկական բազա: Համակարգչային սենյակում առկա են 3 համակարգիչ, 3 դյուրակիր համակարգիչ (նոթբուք), 1 էլեկփրոնային ինփերակփիվ գրափախփակ, 2 պլանշեփ, 2 պափճենահանող սարք և փպիչ:*<br>➢ *Ուսումնական հասփափությունում գործում է նաև GITC ինժեներական լաբորափորիա՝ համապափասխան գույքով(որոշակի ժամանակով):*<br>➢ *Դասասենյակներն ապահովված են  անհրաժեշփ գույքով:* | ➢ <u>Համակարգչային սենյակն ունի համակարգչային տեխնիկայով հագեցնելու կարիք:</u><br>➢ <u>Ինտերակտիվ դասապրոցեսներ վարելու համար դասասենյակներում անհրաժեշտ է դյուրակիր</u> |

| | |
|---|---|
| ➢ *Մարզադահիճը հագեցած է մարզագույքով:*<br>➢ *Տարրական դպրոցի աշակերտների համար կազմակերպվող ամենօրյա փաք սնունդն իրականացնելու համար ուսումնական հաստատությունն ունի խոհանոց, ճաշարան և սննդի պահեստ՝ կահավորված համապատասխան սառնարաններով, գազօջախներով, պահարաններով, սեղան- աթոռներով,լվացարաններով և այլ պարագաներով:* | <u>համակարգիչներ (նոթբուքներ):</u><br>➢ <u>Գրադարան- ընթերցասրահը կարիք ունի համակարգիչների:</u><br>➢ <u>Գրադարանում գրքերի տրամադրման արդյունավետու-թյան բարձրացման նպատակով անհրաժեշտ է ունենալ առկա գրականության էլեկտրոնային հաշվառում:</u> |

## <u>*2.3. Համագործակցությունը Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ.*</u>

| **Ուժեղ կողմեր** | **<u>Թույլ կողմեր</u>** |
|---|---|
| ➢ *Ուսումնական հաստատության* ***կառավարման խորհուրդը*** *գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան:Կառավարման խորհրդի անդամները առաջադրվել են լիազորված մարմնի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և ՏԻՄ ղեկավարի կողմից:Կառավարման խորհուրդն իր գործողություններում ազատ է, անկաշկանդ, նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին, ակտիվորեն ներգրավված է ուսումնական հաստատության կառավարմանը:*<br>➢ *Ըստ կարգի իրականացվող նիստերում Ուսումնական հաստատության տնօրենը* | ➢ <u>Ուսումնական հաստատությունը չունի հոգաբարձուների խորհուրդ:</u><br>➢ <u>Ուսումնական հաստատությունը չունի շրջանավարտների խորհուրդ:</u> |

*ներկայացնում է,իսկ կառավարման խորհուրդը քննարկում է ուսումնական գործունեությանը վերաբերող հարցերը:*

- ***Կառավարման խորհուրդը** վերահսկողություն է իրականացնում Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման նկատմամբ:*
- *Ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը ձևավորված է 47 մանկավարժներից, ովքեր ակտիվորեն ներգրավված են հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական ծրագրերի իրականացման գործում, հայտնում են իրենց դիրքորոշումը ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի առնչությամբ և ընդունում որոշումներ օրակարգային հարցերի մասին:*
- *Ուսումնական հաստատության ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված ուսումնադաստիարակչական աշխատանքերին, սերտ համագործակցում է ուսումնական հաստատության հետ: Ծնողական խորհուրդը համագործակցում է մանկավարժական խորհրդի և այլ խորհուրդների հետ, աջակցում է դպրոցի ԿԱՊԿՈՒ սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործին: Ներգրավված է սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում,ինչպես նաև ապահովում է երեխաների իրավական պաշտպանությունն ուսումնական հաստատությունում:*
- *Դպրոցի աշակերտական խորհուրդը ներգրավված է ուսումնական հաստատության գործունեության կազմակերպման գործում,սովորողները անկաշկանդ հայտնում են իրենց տեսակետը տարբեր հարցերի շուրջ, գիտեն իրենց իրավունքները, ինչպես նաև իրենց պարտականությունները:*

## *2.4. Ուսումնական հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.*

| ***Ուժեղ կողմեր*** | ***Թույլ կողմեր*** |
|---|---|
| ➢ *Ուսումնական հաստատությունը համագործակցում է ՀՀ կառավարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արմավիրի մարզպետի աշխատակազմի, Փարաքար խոշորացված համայնքի համայնքապետարանի, Թաիրով գյուղի վարչական ղեկավարի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի, Գնահատման և թեստավորման կենտրոնի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի,համայնքի գրադարանի, Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, այլ դպրոցների և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ :*<br>➢ *Դպրոցի թե՛ աշակերտական, թե՛ ծնողական, թե՛ մանկավարժական անձնակազմն ակտիվորեն ներգրավված է պետական և համայնքային միջոցառումներին (շաբաթօրյակ, ծառատունկ, սեմինարներ, հանդիպում-քննարկումներ և այլն):*<br>➢ *Ծնողական համայնքը ակտիվորեն ներգրավված է արտադրպրոցական աշխատանքներին, համագործակցության արդյունքում իրականացվում է համայնքից դուրս կազմակերպվող նպատակային և ուսուցողական էքսկուրսիաներ:* | ➢ Ծնողական համայնքը պատրաստակամ է, սակայն չունի բավարար սեփական նախաձեռնողականություն: |

## *2.5. Ուսումնական հաստատության ուսումնական միջավայրը.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ *Ուսումնական հաստատությունը լուսավոր է, ընդարձակ,ապահովված լոկալ ջեռուցմամբ և շուրջօրյա ջրամատակարարամբ:*<br>➢ *Ուսումնական հաստատությունը ապահոված է լարային և անլար ինտերնետային կապով:*<br>➢ *Մշտապես հսկվում է Ուսումնական հաստատության սանիտարահիգիենիկ վիճակը(հատկապես սանհանգույցները)՝ապահովելով սովորողների առողջության և անվտանգության պահպանման նորմերը:*<br>➢ *Ուսումնական հաստատության բակում տեղադրված է խաչքար և ցայտաղբյուր:* | ➢ Ուսումնական հաստատության շենքը ներսում չունի տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար նախատեսված հարմարություններ (թեքատախտակներ): |

## *2.6. Ուսումնական մանկավարժական համակազմի մասնագիտական որակները.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ *Դպրոցի 47 մանկավարժներից, 44-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և ատեստավորված են: 3-ն՝ ունեն միջին մասնագիտական կրթություն և պատրաստվում են մասնակցել կամավոր ատեստավորման: Ուսուցիչներից 2-ը մասնակցել են կամավոր ատեստավորման և ստանում են հավելավճար(80%, 90%): Այս տարի կամավոր ատեստավորմանը մասնակցելու են 10 ուսուցիչ:*<br>➢ *Ուսումնական հաստատության մանկավարժական համակազմը մշտապես մասնակցում է մասնագիտական որակավորումների բարձրացմանն ուղղված դասընթացների, սեմինարների և վեբինարների, ինչպես նաև ինքնակրթվում են:* | ➢ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի մասնակցության պասիվություն: |

| | |
|---|---|
| ➢ *Ուսումնական հաստատության բոլոր ուսուցիչները, անկախ տարիքից,տիրապետում են ՏՀՏ գործիքներին և իրենց իմացությունները կիրառում դասերի ընթացքում:*<br>➢ *Ուսումնական հաստատությունն ունի տարակարգ ունեցող ուսուցիչներ, մենթոր ուսուցիչներ, կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ, պետական պարգևների արժանացած ուսուցիչներ:*<br>➢ *Ուսումնական հաստատության մեթոդմիավորման նախագահները սկսնակ ուսուցիչների համար կազմակերպում են մասնագիտական զարգացմանը նպաստող տարբեր քննարկումներ, խորհրդատվություններ, նախապատրաստում են մասնակցելու հերթական ատեստավորմանը:* | |

## 2.7. Ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը՝ չափորոշչային պահանջներին համապատասխան.

| ***Ուժեղ կողմեր*** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ➢ *Ուսումնական հաստատությունն ապահովում է յուրաքանչյուր սովորողի կրթության և դաստիարակության հավասար իրավունքը: Հետևողական աշխատանքներ են տարվում ուսման որակը բավարարելու, աշակերտների կարողությունները, հմտությունները, արժեքները, դիրքորոշումները զարգացնելու, ինչպես նաև ամրապնդվում է ռազմահայրենասիրական, հայրենասիրական, բարոյական դաստիարակությունը, ուշադրություն ենք դարձնում առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեությանը:*<br>➢ *Ուսումնական հաստատությունը մասնակցություն է ցուցաբերել տարածքային և մարզային օլիմպիադաններին:* | ➢ Հանրապետական օլիմպիադա-ների մասնակցության բացակայություն: |

| | |
|---|---|
| ➢ *Ուսումնական հաստատությունը գրեթե յուրաքանչյուր տարի ունեցել է հիմնական կրթության գերազանցության վկայականով ավարտած աշակերտներ:2018-2019 ուսումնական տարում ունեցել ենք նաև մեդալակի շրջանավարտ: Յուրաքանչյուր տարվա շրջանավարտների գրեթե 80% ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ,ինչպես նաև բարձրագույն կրթությունը շարունակել են այլ երկրներում:*<br>➢ *Ուսումնական հաստատությունը մասնակցում է նաև մարզական միջոցառումներին, ունեցել ենք շախմատի միջազգային մրցաշարին մասնակցած և առաջին տեղ զբաղեցրած աշակերտ, ունենք նաև բռնցքամարտիկ աշակերտ,ով մասնակցել է Եվրոպայի աշխարհի մրցաշարին և զբաղեցրել 4-րդ տեղը:*<br>➢ *Ուսումնական հաստատությունում կազմակերպվում են բազմաթիվ նպատակային արտադասարանական, արտադպրոցական, դպրոցական միջոցառումներ, որոնք զարգացնում են սովորողի ճանաչողական ակտիվությունը, մշակույթային զարգացվածությունը, հայրենասիրական դաստիարակությունը:* | |

## 2.8. Ուսումնական հաստատության կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները, կիրառվող նորարարությունները.

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ➢ *Ուսումնական հաստատությունն ունի համակարգչային կաբինետ,որտեղ գործում է GITC ինժեներական լաբարատորան:*<br>➢ *Վերջին տարիներին համակարգչային սենյակը համալրվել է ինտերակտիվ գրատախտակով, համակարգչով, նոթբուքով:*<br>➢ *Դպրոցի ողջ տարածքն ապահովված է անլար և լարային ինտերնետային կապով:* | ➢ Ուսումնական հաստատությունը չունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ՝ անհրաժեշտ նյութերով փորձարարական |

| | |
|---|---|
| ➢ Հանդիսությունների դահլիճում առկա է ինտերակտիվ գրատախտակ, որը հնարավորություն է տալիս միջոցառումները ներկայացնել ժամանակակից մեթոդներով: | սարքավորումներով: <br>➢ Համակարգչային սենյակը նոր գույքի համալրման կարիք ունի, ինչպես նաև տեխնիկայի կարիք ունի: |

## 2.9. Ուսումնական հաստատության բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր.

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ Ուսումնական հաստատության մանկավարժական համակազմը, խորհրդակցական այլ մարմինները սերտ համագործակցում են սովորողների կրթության համար հարմարեցված միջավայր ստեղծելու գործում: Համագործակցության արդյունքում ապահովվում է յուաքանչյուր սովորողի, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը: <br>➢ Ուսումնական հաստատության համակազմի և շահառու այլ մարմինների կողմից հանդիպում-քննարկումների, սեմինարների ընթացքում ներկայացվում են սովորողների թե՛ իրավունքները, թե՛ պարտականությունները: <br>➢ Ուսումնական հաստատությունում պաշտպանված են թե՛ մանկավարժական համակազմի, թե՛ աշակերտների ազատ խոսքի, մտքերի արտահայտման, սեփական կարծիքի դրսևորման իրավունքները: <br>➢ Ուսումնական հաստատության բազմամասնագիտական թիմի (հոգեբան, սոցիալական մանկավարժ, հատուկ մանկավարժ) կողմից աշխատանքներ են | ➢ Ուսումնական հաստատությունում կազմակերպվող միջոցառումների ցածր մասնակցութուն: <br>➢ Սովորողների կողմից սեփական նախաձեռնությունների պասիվություն՝ հիմնված սեփական ներուժի թերագնահատման վրա: |

| | |
|---|---|
